**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 01/2019**
**N ԲԸԱՀԾՁԲ-03/2017 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** «25» 01 **2019թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ղլեչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 15.02.2017թ-ին կնքված «Գույքի հավատարմագրային կառավարման» N ԲԸԱՀԾՁԲ-03/2017 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան, գինը և վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով կողմերը համաձայնության եկան Պայմանագրի գումարը սահմանել **3 172 200 000** (երեք միլիարդ հարյուր յոթանասուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, այդ թվում՝

1.1.1 Հավատարմագրային կառավարչի վարձատրությունը՝ **314 200 000** (երեք հարյուր տասնչորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

1.1.2 Հավատարմագրային կառավարչի կատարած փաստացի ծախսերի հատուցումը՝ **2 858 000 000** (երկու միլիարդ ութ հարյուր հիսունութ միլիոն) ՀՀ դրամ:

1.2 Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.3 Պատվիրատուն մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013150041**
**ՀՎՀՀ 01840082**
**հեռ. 59-61-20**

**Վ. Մովսիսյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ**
**ք. Երևան, Տիգրանյան 27**
**«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արաբկիրի մ/ճ**
**Հ/Հ 2050622017491003**
**ՀՎՀՀ 00087963**
**Էլ. հասցե - armen.khanamiryan@secdr.am**
**Հեռ. 010 23 00 17**

**Ա. Ղլեչյան**
**/տնօրեն/**
**(ստորագրություն)**
Կ.Տ

Հավելված N 1
<<25>> 07 2019թ.
Համաձայնագիր N 01/2019
N ԲԸԱՀԾՁԲ-03/2017 գնման պայմանագրի

# Վճարման ժամանակացույց

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ԾՈ արտաբյուջեից /03.01.01.04/ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին եռամսյակ | | | 2-րդ եռամսյակ | | | 3-րդ եռամսյակ | | | 4-րդ եռամսյակ | | | Ընդամենը տարի |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | Օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1. | Հավատարմագրային կառավարման ծառայություններ 66161100/1 | 119,700.0 | 119,700.0 | 119,700.0 | 168,000.0 | 168,000.0 | 168,000.0 | 215,650.0 | 215,650.0 | 215,650.0 | 314,200.0 | 314,200.0 | 314,200.0 | 314 200 000 |
| 2. | Հավատարմագրային կառավարման ծառայություններ 66161100/2 | 753,000.0 | 753,000.0 | 753,000.0 | 1,420,000.0 | 1,420,000.0 | 1,420,000.0 | 2,143,500.0 | 2,143,500.0 | 2,143,500.0 | 2,858,000.0 | 2,858,000.0 | 2,858,000.0 | 2 858 000 000 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | 3 172 200 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-61-20

Վ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 27
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արաբկիրի մ/ճ
Հ/Հ 2050622017491003
ՀՎՀՀ 00087963
Էլ. հասցե - armen.khanamiryan@secdr.am
Հեռ. 010 23 00 17

Ա. Ղլեչյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ